



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«02» 05 2018թ.

No 06/3.2/22081-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԹՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈԹՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.04.2018թ.

թիվ Պ-19 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի հաշվարկը կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Օրենսգրքի կիրառության իմաստով հաշվառման հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ՝ հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից,

- 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի՝ առանձին հարկատեսակների վերաբերող բաժիններով սահմանված դեպքերում հարկի կամ հարկման բա-

զայի հանձնարկման համար հիմք հանդիսացող հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դրույթների հիման վրա, եթե օրենսգրքով չեն նախատեսվում դրանց կիրառության առանձնահատկություններ,

- 16-րդ հոդվածով սահմանված են արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները, մասնավորապես՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաների և ապրանքների սկզբնական արժեքների որոշման առանձնահատկությունները: Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման հարկային հայտարարագրի ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ապրանքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը,

- 40-րդ հոդվածով սահմանված է աշխատանքի կատարման և ծառայության մատուցման պահը (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի),

- 106-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկով հարկման բազան որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե օրենսգրքի 6-րդ բաժնով և ընդհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չեն: Ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով վերագնահատված ակտիվների և պարտավորությունների, որոնք հաշվի են առնվում վերագնահատված արժեքով,

- 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշվառման հաշվեգրման մեթոդի կիրառության շրջանակներում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է շահութահարկ վճարողին անվերապահ վճարման (հատուցման),

կամ շահութահարկ վճարողը կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս: Մասնավորապես՝ աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պահին:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները, գրությամբ ներկայացված հարցադրման վերաբերյալ հայտնում ենք, որ շահութահարկի կամ շահութահարկով հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվառման առումով օրենսգրքի 16-րդ հոդվածով առանձնահատկություններ սահմանված են արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման մասով ապրանքների սկզբնական արժեքների որոշման համար, հետևաբար՝ դրանք որոշվում են ապրանքի ներմուծման հարկային հայտարարագրի ներկայացման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

Միաժամանակ, շահութահարկով հարկման բազայի որոշման իմաստով ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման մասով ապրանքների սկզբնական արժեքների մեջ չներառվող ծախսերի (այդ թվում՝ բեռնափոխադրման ծախսերի) հաշվառման համար օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ի մասով առանձնահատկություններ սահմանված չեն, հետևաբար՝ անհրաժեշտ է առաջնորդվել օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 109-րդ հոդվածի 3-րդ մասով և 40-րդ հոդվածով սահմանված կարգավորումներով:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ